

# KAISER PERMANENTE

## Բժշկական ֆինանսական օգնության քաղաքականության ամփոփագիր

Kaiser Permanente-ի Բժշկական ֆինանսական օգնության (Medical Financial Assistance, MFA) ծրագիրը ֆինանսական օգնություն է տրամադրում որակավորվող հիվանդներին, որոնց օգնություն է հարկավոր շտապ օգնության կամ բժշկական տեսակետից անհրաժեշտ խնամքի համար, որը նրանք ստանում են Kaiser Permanente հիմնարկությունում կամ Kaiser Permanente մատակարարի կողմից: Հիվանդները կարող են դիմել MFA ծրագրի համար մի քանի եղանակով, ներառյալ՝ անձամբ, հեռախոսով կամ լրացնելով ու ուղարկելով թղթե դիմում: Հիվանդները պետք է համապատասխանեն ներքևում նշված իրավասության պահանջներին, որպեսզի որակավորվեն:

### Ո՞վ է իրավասու Ֆինանսական օգնության համար և որո՞նք են պահանջները:

Ծրագիրն օգնում է ցածր եկամուտ ունեցող, ապահովագրություն չունեցող կամ քիչ ծառայություններ ստացող հիվանդներին, ում օգնություն է հարկավոր ամբողջությամբ կամ մասամբ իրենց բժշկական խնամքի համար վճարելու հարցում: Ընդհանրապես, հիվանդներն իրավասու են Ֆինանսական օգնության համար, երբ նրանց Համախառն ընտանեկան եկամուտը կազմում է կամ ցածր է Դաշնային աղքատության ուղենիշների (Federal Poverty Guidelines, FPG) 350%-ից, կամ եթե նրանք ունեն անսովոր բարձր բժշկական ծախսեր: Հիվանդները պետք է խորհրդակցեն Հիվանդի ֆինանսական խորհրդատուի հետ՝ իրենց իրավասությունը որոշելու և դիմելու օգնության համար:

*Այն հիվանդներից, որոնք իրավասու են բժշկական ֆինանսական օգնության համար, չի գանձվելու ավելի քան սովորաբար գանձվող գումարները (amounts generally billed, AGB) շտապ օգնության կամ բժշկական տեսակետից անհրաժեշտ այլ խնամքի համար: Տես՝ [kp.org/mfa/ncal](http://kp.org/mfa/ncal) կայքը AGB-ի մասին տվյալների համար:*

### Արդո՞յք Kaiser Permanente-ը գնում է հիվանդներին հանրային ու մասնավոր ծրագրի իրավասության համար:

Kaiser Permanente-ը հիվանդներին օգնություն է տրամադրում՝ գտնելու հնարավոր հանրային ու մասնավոր առողջապահական ապահովագրման ծրագրեր, որոնք կարող են աջակցել առողջապահական խնամք ստանալու կարիքներին: Հիվանդը, ով իրավասու է համարվում հանրային ու մասնավոր առողջապահական ապահովագրման ծրագրի համար, պետք է դիմի այդ ծրագրերի համար:

### Ի՞նչ է ապահովագրում այս ծրագիրը:

Բժշկական ֆինանսական օգնության ծրագիրն ապահովագրում է բժշկական տեսակետից անհրաժեշտ խնամքը, որը տրամադրվել է Kaiser Permanente բժշկական գրասենյակում, հիվանդանոցում կամ դեղատանը, կամ տրամադրվել է Kaiser Permanente մատակարարի կողմից: Չապահովագրվող ծառայությունների տեսակներից են նրանք, որոնք Kaiser Permanente մատակարարը չի համարում արտակարգ իրավիճակ կամ բժշկական տեսակետից անհրաժեշտ, անպտղության բուժումներ և փոխնակ մայրության ծառայություններ, ինչպես նաև առողջապահական խնամքի ապահովագներ: Խնդրում ենք կարդալ ամբողջական ցանկը MFA քաղաքականության փաստաթղթում:

### Կա արդո՞յք լեզվական օգնություն:

Ձեզ համար անվճար մատչելի են բանավոր թարգմանիչներ: Բժշկական ֆինանսական օգնության դիմումը, քաղաքականությունն ու այս քաղաքականության ամփոփագիրը կարող են մատչելի լինել ձեր լեզվով: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք 1-800-464-4000 հեռախոսահամարով կամ այցելեք մեր կայքը՝ [kp.org/mfa/ncal](http://kp.org/mfa/ncal):

### Արդո՞յք Kaiser Permanente-ն ունի Ֆինանսական օգնության քաղաքականություն:

Դուք կարող եք խնդրել Kaiser Permanente-ի Բժշկական ֆինանսական օգնության քաղաքականության անվճար պատճենը՝ զանգահարելով 1-800-390-3507 հեռախոսահամարով, նամակ գրելով P.O. Box 30006, Walnut Creek, CA 94598, կամ այցելելով մեր կայքը՝ [kp.org/mfa/ncal](http://kp.org/mfa/ncal):

### Օգնության կարիք ունե՞ք:

Բժշկական ֆինանսական օգնության դիմելու գործընթացի մասին օգնության կամ հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել 1-800-390-3507

հեռախոսահամարով կամ գրուցել Հիվանդի  
ֆինանսական խորհրդատուի հետ Հիվանդի  
ֆինանսական խորհրդատուների բաժանմունքից՝  
Kaiser Permanente ցանցակաճ հիվանդանոցում:

**Ինչպե՞ս պետք է դիմել:**

Դուք կարող եք դիմել բժշկական ֆինանսական  
օգնության համար մի քանի եղանակով՝ խնդրելով  
ծրագրի մասին տեղեկություններ անձամբ կամ  
հեռախոսով, կամ խնդրելով թղթե դիմում հետևյալ  
աղբյուրներից որևէ մեկից.

- Հիվանդի ֆինանսական խորհրդատուից Հիվանդի  
ֆինանսական խորհրդատուների բաժանմունքից՝  
Kaiser Permanente ցանցակաճ հիվանդանոցում
- Չանգահարելով 800-390-3507 հեռախոսահամարով
- Փոստով (անվճար)՝ P.O. Box 30006, Walnut Creek,  
CA 94598
- Ներբեռնելով դիմումը Kaiser Permanente Community  
կայքից՝ [kp.org/mfa/ncal](http://kp.org/mfa/ncal):

Խնդրում ենք ուղարկել լրացված դիմումները  
(ներառյալ՝ բոլոր պահանջվող փաստաթղթերն ու  
տեղեկությունները, որոնք նշված են դիմումի  
ցուցումներում) մոտակա Kaiser Permanente  
հիվանդանոցի ընդունարան կամ շտապ օգնության  
բաժին, կամ փոստով ուղարկել դիմումը հետևյալ  
հասցեով՝ MFA Program, P.O. Box 30006, Walnut Creek,  
CA 94598:

Kaiser Permanente-ը կդիտարկի ներկայացված  
դիմումները, երբ դրանք ամբողջությամբ լրացված են, և  
կորոշի՝ արդյոք դուք իրավասու եք՝ ըստ Kaiser  
Permanente Բժշկական ֆինանսական օգնության  
քաղաքականության (Medical Financial Assistance  
Policy): Կիսատ դիմումները կարող են հետաձգել  
մշակումը կամ դառնալ ձեր MFA դիմումի մերժման  
պատճառ, սակայն Kaiser Permanente-ը կտեղեկացնի  
դիմորդներին ու նրանց հնարավորություն կտա  
ուղարկել պակասող փաստաթղթերը կամ  
տեղեկությունները մինչև պահանջվող  
վերջնաժամկետը: